Ոսկանի մահուամբ՝ ընդհատումներով շարունակուած է մինչեւ 1710 : Այնուհետեւ մէկ ու կէս դար՝ ի Մարսիլիա հայ տպարան գոյութիւն չունենար . 1862 ին է որ **Ճ. Աւամեան** քանի մը տարուան համար հոն կը հաստատուի, եւ իր՝ հոնկէ հեռանալէն 21 տարի վերջ միայն տպարան մը կը հիմնէ նշ. ազգ. գործիչ **Մ. Փօրթուգալեան**՝ անխափան գործելով ցարդ :

26Դ. Տպարան Ս. Էջմիածնի եւ Ս. Սարգսի Զօրավարի. —

Սոյն թուահամարով եւ տիտղոսով տպարանին բոլորած գործունէութիւններն ասկէ առաջ արձանագրած էինք 3 տարբեր տեղեր . Լիվոռնոյ (Իտալիա , 1670 - 1702), Կ. Պոլիս (Թուրքիա , (1700 - 1) եւ Իզմիր (1676) : Ամսդերտամի պահելով այս գործատան ծագման ամբողջական պատմութիւնը՝ խօսինք հիմա ՈՍԿԱՆ Վ.ՐԴ.ի եւ իր անձնուէր աշխատաւորներուն մասին : — Երկար վարանումներէ վերջ , — քանի որ բէ դիզուած պարոքերը կային եւ բէ իր գիրքերուն բողոքական երկրի մը մէջ տպուած ըլլալն այնտեսակ խառարեալ ժամանակներու մէջ արգելք կը հանդիսանար անոնց սպառումին , — Երեւանեցին Ոսկան տեղափոխեցաւ անցնիլ Ֆրանսա՝ որ բէեւ կարողիկ երկիր՝ սակայն ունէր Գալլիկանութիւն (Gallicanisme) անուամբ եկեղեցական ինքնավարութիւն , եւ ուր հեգ տպագրիչը կը յուսար բէ կրօն. հալածանքն այնքան սաստիկ չըլլար : Այս առաջադրութեամբ , 1669 ին Լուի ԺԴ.ի կ՚ուղղէ աղերսագիր մը՝ անոր ընծայելով իր դրոշմած Աստուածաշունչէն օրինակ մը : Թագաւորը նուէրը կ՚ընդունի , ինչպէս նաեւ իր երկրին մէջ տպարան մը բանալու մասին Ոսկանի մատուցած խնդրանքը , պայմանաւ որ կարողիկ կրօնին հակառակեաց դէմ ոչինչ պարունակեն իր տպելիքները : Վստահելով արքունական խոստումին , Ոսկան Վ.րդ. Ամսդերտամէն Մարսիլիա փոխադրեց համանուն տպարանը: Նիւթական խնդիրը սակայն չափազանց կը նեղէր զինքը . հարկադրուեցաւ իրեն շահակից ընկեր ընելու ԹԱԴԷՈՍ ԵՐԵՑ ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆը որ արդէն իրեն գործակցած էր յԱմսդերտամ: Ոսկան իրեն կը վերապահէ գիրքերու սրբագրութիւնը , կասկածելով Թադէոսի ուղղամտութեանը վրայ : 1673 ին մէկտեղ պայմանաւորուած են արդէն եւ երկուքին 1000ական դահեկան դրամագլուխ դրած : Տպուած գիրքերէն 350 օրինակ Ոսկանի սեփականութիւնը պիտի դառնային՝ իբր սրբագրութեան վարձք , իսկ գոյացած հասոյթը կէս առ կէս պիտի բաժնէին : Բայց հազիւ բէ տպարանը բացուած էր , կարողիկ Բրոբականը չուշացաւ իր իշխանութեանը տակ առնել զայն . խնդրուեցաւ Մարսիլիոյ եպիսկոպոսէն որ արգիլէ տպագրութիւնը ոչ-պապական գիրքերու՝ այդ բարեպաշտ բեմին մէջ : Եպիսկոպոսը խիստ միջոցներ ձեռք կ՚առնէ Ոսկանի դէմ եւ Հռոմէն ղրկուած հայ-հռոմ. քահանայի մը միջոցաւ գրաքննիչի մը պաշտօնը կ՚սկսի կատարել : Ծերունին Ոսկան չընկրկեցաւ այս խոչընդոտներուն առջեւ . քաջարար ձեռնարկեց գործի , նոյն տարին իսկ (1673) տպելով **Գիրք կարեւոր համապազորդեանը** «Ներում կայ պարունակեալ պարզատօմար , լուսնացոյց եւ այլ մանրամասնաբար բան» (*) : Ձեռնհասուհ կ՚ըլլայ նաեւ **Նարեկի** տպագրութեան որ անկատար մնացած է [48 էջ միայն տպուած] իր մահուամբ : Նարեկի բոլոր տպագրութիւններէն անդրանկագոյնն է առիկա որուն օրինակներն խիստ հազուագիւտ են հիմայ : — Բայց իր գլխաւոր մտադրութիւնն էր լոյս ընծայել պատկերազարդ **Ժամագիրք** մը , խեղք առանց ընելու որ այդ գիրքն անանկ հրատարակութիւն մըն էր, որ առաւել քան երբեք ենթարկելի էր պապաշունչ գրաքննութեան խստութեանց , մանաւանդ որ իր դիմացն ունէր հայ-կարողիկ գրաքննիչ մը : Թադէոս երեց բէեւ անոր շահընկերը, բայց կրօնամոլներէ կաշառուած՝ սկսաւ ստորին ընթացք մը բռնել ծերունիին հանդէպ: Ժամագիրքին առաջին թերթերը հազիւ բէ մամուլէն դուրս ելած էին, եւ ահա Համազասպեան ապօրէն ու վատ կերպով կը շարժի իր դէմ , մատնութիւններով եւ անկուր քսութիւններով ջանալով լուր տարածել բէ Ոսկան հերետիկոս մըն է , քանի որ կարուղիկէ ուղղափառութեան դէմ էր իր տպագրածը, եւ խնդիրը կը հանէ պետական եւ կրօն. ատեաններու առջեւ : Հալածանքն այնքան առաջ կը տանի եւ բազմավաստակ ու բազմերախտ ալեւորն ա՛յնքան կը տառապեցունէ, որ Ոսկան վրդ. ուր ուրեմն կը մեռնի հոն, սրտին ցաւէն, պանդխտութեան մէջ, 1674 ի սկիզբները՝ 60 տարեկան: — Օրմանեան Ս.ի «Ազգապատում» խորագիրով ստուար անտիպ երկասիրութենէն կը քաղենք սա քանի մը խորհրդածութիւնները . «Իր կրած երկարատեւ եւ հոգեմաշ տագնապներուն

(*) 3 տարի վերջ այս գիրքին Բ տիպը եղած է «Ներում կայ պարունակեալ լուսնացոյց եւ այլ բանք յոյժ պիտանիք մերազնեայ հայկազունեաց եւ յաւէտ վաճառականաց: **Նաեւ, կ'ըսէ «Տեառն Ոսկանայ վրդ.ի՝ սակս դառն մահուան իւրոյ ի պատճառէ տիրանենգ եւրցոյն չԹադէոսի Երեւանեցւոյ»** բանաձեւով: